«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 32-01/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 23.10.2018թ. ժամը 13:00

«ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանի 29.08.2018թ-ի թիվ 863 գրության հետագա ընթացքը ապահովելու նպատակով, սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Հոկտեմբերի 23-ին ժամը 13.00-ին՝ 11.10.2018թ-ի տեղափոխված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Սնանկության գործով կառավարիչ՝Մայիս Հայրապետյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանը պատշաճ ծանուցվել էր նիստի մասին, սակայն նիստին չէր ներկայացել:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
«ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանի 29.08.2018թ-ի թիվ 863 գրության հետագա ընթացքը ապահովելու նպատակով, սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, գրության մեջ նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց,որ դիմումի քննարկումը 11.09.2018թ-ի նիստում հետաձգվել էր լրացուցիչ մանրամասն ստուգված և ճշտված տեղեկատվություն ստանալու անհրաժեշտությունից ելնելով,որի համար 03.10.2018թ-ին գրավոր դիմվել է «ՍԳԿԿ» ԻԿԿ տնօրենին:
«ՍԳԿԿ» ԻԿԿ տնօրինության կողմից 04.10.2018թ-ին ստացվել է ՍԳ կառավարիչ՝Մայիս Հայրապետյանի կողմից՝ 2015,2016 և 2017 թթ-ի համար ներկայացված Տեղեկանքների լուսապատճենները 37 թերթից,որոնք ներկայացվեց հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի նախագահն ներկայացրեց նաև,որ հետաձգված հանձնաժողովի նիստի հրավիրման 25.09.2018թ-ի ծանուցմամբ խնդրել ենք ՍԳ կառավարիչ՝ Մ.Հայրապետյանին, որպեսզի հանձնաժողովին ներկայացնի կարգապահական վարույթի քննման համար անհրաժեշտ տեղեկատվություն և ապացույցներ:

ՍԳ կառավարիչ՝Մ.Հայրապետյանից 06.10.2018թ-ին ստացվել է պատասխան,որը նույնպես հանձնաժողովի նախագահն ներկայացրեց անդամներին ծանոթանալու և հետագայում կարծիք հայտնելու համար:Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց,որ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.4-րդ կետի համաձայն, հանձնաժողովի նիստի վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված սնանկության գործով կառավրչի և/կամ այլ անձնաց բացակայությունը արգելք չէ կառավարչի նկատմամբ հարուցված կարգապահական խախտման քննարկման համար և առաջարկեց նիստը շարունակել առանց ՍԳ կառավարիչ՝Մ.Հայրապետյանի,քանի որ կողմը պատշաճ ծանուցված էր և հնարավորություն ունի մասնակցելու հանձնաժողովի նիստին:

Հանձնաժողովի անդամները ծանոթացան ներկայացված փաստաթղթերին և գրություններին և համաձայնեցին այն կարծիքին,որ պետք է վերսկսել կասեցված կարգապահական վարույթը և քննությունը կազմակերպել ՍԳ կառավարչի բացակայությամբ,քանի որ ըստ էության նիստերի անցկացման սենյակը գտնվում է կառավարչի նստավայրի անմիջական հարևանությամբ և նրա համար ցանկության դեպքում ներկա գտնվելը կապված չի որևէ տարածքային պոռբլեմի հետ և անցած նիստի հայտարարությունը ու իր գրավոր պատասխանում կառավարչի կողմից,հանձնաժողովի նիստի իր մասնակցությունը ու համապատասխան փաստաթղթերի ներկայացումը, պայմանավորում է «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ Խորհրդի նախագահ՝Ա.Չիտչյանի կարգապահական վարույթի իրականացման նիստին մասնակցելու պայմանով,ինչը հիմնավորում է նրան հարցեր ունենալու և այդ հարցերը տալու ցանկությամբ:

Հանձնաժողովի անդամները միաձայն որոշեցին անցկացնել կարգապահական վարույթի քննությունը,առանց ՍԳ կառավարիչ՝Մ.Հայրապետյանի ներկայության:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը առաջարկեց հայտնել կարծիքներ արդեն ծանոթացած դիմումի,ներկայացված տեղեկատվությունների,գրությունների և պատասխանների վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը ձայնի իրավունք վերցրեց և հայտնեց այն կարծիքը,որ ըստ էության կարգապահական վարույթի հիմք է հանդիսացել այն հանգամանքը,որ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի տնօրինությունը ներկայացված Տեղեկանքների մեջ հայտնաբերել է անհամապատասխանություններ և սահմանված կարգով,պատշաճ գրավոր ծանուցմամբ՝09.04.2018թ-ին,03.05.2018թ-ին և 17.05.2018թ-ին խնդրել է կառավարչից տալ պարզաբանումներ այդ անհապատասխանությունների վերաբերյալ,որը ի դեպ «ՍԳԿԿ» ԻԿԿ տնօրինության իրավունքն է և կիրառվող պրակտիկա է,բոլոր անդամների հանդեպ: Կառավարչի կողմից պարզաբանումներ չի ներկայացվել,որպիսի գործողությունները շարունակվում է նաև կարգապահական հանձնաժողովի պարագայում,որը առկա է կառավարչի նիստերին չներկայանալու և իր ներկայությունը և պարզաբանումներ տալու պարտականությունը պայմանավորում է գրավոր չհիմնավորված պահանջներով, մասնավորապես «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ Խորհրդի նախագահ՝Ա.Չիտչյանի կարգապահական վարույթի իրականացման նիստին մասնակցելու «պահանջով»:

Իր կարծիքով ՍԳ կառավարիչ՝Մ.Հայրապետյանի գործողությունները իր մեջ կրում են անհարգալից վերաբերմունք «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի տնօրինության,Կարգապահական հանձնաժողովի անդամների և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի բոլոր անդամների նկատմամբ,որը հարիր չէ սնանկության գործով որևէ կառավարչի և հակասում է Կազմակերպության կանոնադրությանը և Վարքագծի կանոնագրքին:Հանձնաժողովի անդամը նշեց նաև,որ նման անհարգալից և ոչ կոնստրուկտիվ մոտեցումը չի կարող բերել «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի անդամների/կառավարիչների/ նորմալ հարաբերությունների զարգացման և կարող է խաթարել նրանց հետագա զարգացմանը,բարելավմանը և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի հանդեպ հարգանքի մթնոլորտի ձևավորմանը և զարգացմանը,որի ձևավորման համար պետք է ջանքեր չխնայեն բոլոր անդամները,այդ թվում նաև՝Մ.Հայրապետյանը:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը համաձայնելով կարծիքի հետ,ներկայացրեց,որ իր համար անհասկանալի է կառավարչի գործողությունների շարժառիթը,նա հիշեցրեց,որ անցած

նիստի սկսելուց հետո,ինքը անձամբ.չնայած այն փաստին որ նշանակված ժամը արդեն լրացել էր,գնաց կողքի սենյակ և տեղեկացրեց Մ.Հայրապետյանին,որ նիստը սկսվել է,որից հետո միայն Մ.Հայրապետյանը ներկայացավ նիստի անցկացման սենյակ,բայց հայտարարեց,որ ինքը հրաժարվում է նիստին մասնակցել եթե նիստին չի մասնակցում Խորհրդի նախագահ Ա.Չիտչյանը և կմասնակցի միայն Խորհրդի նախագահի ներկայության պայմաններում:Հանձնաժողովի անդամը նշեց,որ իր համար անհասկանալի և անընդունելի է այն հանգամանքը,որ Կարգապահական հանձնաժողովի նիստին մասնակցությունը Մ.Հայրապետյանը պայմանավորում է ինչ-ինչ հանգամանքներով և փորձում է արդարացնել իր նիստի չմասնակցելը,որոշակի պայմանների առաջ քաշման և դրանց բավարարված չլինելու հանգամանքով,որը իր կարծիքով չհիմնավորված պատճառաբանություններ է և անհարգալից վերաբերմունք է հանձնաժողովի անդամների նկատմամբ:

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ից ստացված գրության և ներկայացված Տեղեկանքների ուսումնասիրություններից պարզվում է,որ գրությանը կից ներկայացված ցուցակից միայն մեկ դեպքում է կառավարիչը ներառել տեղեկատվությունը իր ներկայացրած տեղեկանքներում,մնացած 13 դեպքերում սնանկության վարույթներով ստացված դրամական միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված տարեկան Տեղեկանքներում բացակայում են,որի վերաբերյալ ՍԳ կառավարիչ Մ.Հայրապետյանը չի տալիս ոչ մի տեղեկատվություն: «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի տնօրինության կողմից 09.04.2018թ-ին,03.05.2018թ-ին և 17.05.2018թ-ին գրավոր կարգով փորձել են ստանալ կառավարչից այդ գործերի վերաբերյալ տեղեկատվություն կամ պարզաբանում,բայց կառավարիչը ստանալով բոլոր գրությունները ոչ մի անգամ չի պատասխանել կամ բանավոր չի տվել ոչ մի պարզաբանում:Կարգապահական հանձնաժողովի կողմից նույնպես նիստի հրավիրման ծանուցմամբ կառավարչին առաջարկվել է ներկայացնել փաստաթղթեր,կամ ապացույցներ,բայց կառավարչի կողմից ոչ մի պարզաբանում կամ փաստաթուղթ չի ներկայացվում,որպիսի գործելավոճը հարիր չէ սնանկության գործով կառավարչին և չի նպաստում կառավարիչների փոխհարաբերությունների զարգացմանը:Հանձնաժողովի անդամը նշեց նաև որ համաձայն «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 3-րդ հոդվածի 3.4 կետի `*կառավարիչը ում նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ պարտավոր է.Հանձնաժողովի պահանջով ներկայացնել գրավոր բացատրություններ.* Մ.Հայրապետյանը չի կատարել հանձնաժողովի պահանջները,որը ինքնին արդեն կարգապահական խախտում է,որպիսի արարքի համար ինքը առաջարկում է Սնանկության գործերով կառավարիչ`Մայիս Հայրապետյանին ենթարկել կարգապահական տույժի:

Հանձնաժողովի նախագահ`Տ.Հարությունյանը հայտնեց կարծիք առ այն,որ համաձայն «Սնանկության գործով կառավարչի վարքագծի Կանոնագրք»-ը նպատակ ունի ապահովել Կազմակերպության անդամների ընդհանուր շահերը,կարգավորել անդամների փոխհարաբերությունները:

Կազմակերպության բոլոր անդամները իրենց գործունեությունն իրականացնելիս պարտավոր են առաջնորդվել սույն Կանոնագրքով և պահպանել սահմանված բոլոր կանոնները:

1-ի հոդված,1.16.կետ`Կազմակերպության աշխատանքները արդյունավետ դարձնելու նպատակով կառավարիչը պարտավոր է ժամանակին իրականացնել Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական փաստաթղթերթով հաստատված վճարները:

1.35.կետ`Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է նպաստել «ՍԳԿԿ»ԻԿԿ-ի և կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը:

5-րդ հոդված`Սնանկության գործով կառավարչի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,5.2.կետ`Կազմակերպությանը տրամադրել տեղեկատվություն իրականացրած յուրաքանչյուր աճուրդային վաճառքի վերաբերյալ.

5.3.կետ`Կազմակերպությանը տրամադրել տեղեկատվություն իրականացված աճուրդ վաճառքի արդյունքում գոյացած գումարների բաշխման վերաբերյալ:

7.8.կետ`Իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս սնանկության գործով կառավարիչը պարտավոր է պահպանել ՀՀ օրենսդրությամբ,«Սնանկության մասին» ՀՀ

օրենքով,Կանոնադրությամբ,սույն Կանոնագրքով և Կազմակերպության ներքին իրավական փաստաթղթերթով սահմանված բոլոր պահանջները:
7.10.կետ՝Այն դեպքում,երբ Կազմակերպության համապատասխան մարմինները հայտնաբերում են որևէ սնանկության գործով կառավարչի կողմից ՀՀ Օրենսդրությամբ, Կազմակերպության կանոնադրությամբ,ներքին իրավական փաստաթղթերով և սույն Կանոնագրգով հաստատված պահանջների խախտում,իր լիազորությունների չարաշահում կամ ոչ պատշաճ իրականացում,պատշաճ կերպով տեղեկացնում են կառավարչին այդպիսի խախտումների վերաբերյալ և պահանջում վերացնել դրանք:
Վերլուծելով Կանոնագրքի նշված հոդվածների կետերը և համադրելով ունեցած փաստերի հետ պարզվում է,որ Կազմակերպությունը,ՍԳ կառավարիչ՝Մ.Հայրապետյանի 2015,2016 և 2017 թվականների համար ներկայացված տարեկան տեղեկատվությունների մեջ հայտնաբերել է անճշտություններ և պատշաճ ծանուցմամբ խնդրել է տալ պարզաբանումներ, որին կառավարիչը չի պատասխանել:Կազմակերպությունը ևս երկու անգամ պատշաճ կարգով փորձել է ստանալ պարզաբանումեր,որին կառավարիչը չի արձագանքել,չնայած այն փաստին որ գրությունները պատշաճ կարգով հասցվել են Մ.Հայրապետյանին:
Վերոգրյալ հիմքով հարուցվել է կարգապահական վարույթ և կարգապահական վարույթի ընթացքում՝կարգապահական հանձնաժողովի կողմից է փորձ կատարվել ստանալ պարզաբանումներ կամ փաստաթղթեր,որին կառավարիչը պատասխանել է 04.10.2018թ-ի իր գրությամբ հանձնաժողովի նիստի ծանուցումը համարելով«Խեղաթուրված բառերով և մտքերով»կազմված,սույն թվականի Հոկտեմբերի 11-ին նշանակված հանձնաժողովի նիստին պահանջելով գրավոր ծանուցմամբ նիստին հրավիրել «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի նախագահին,որին ինքը ունքը ունի կոնկրետ հարցեր,որի պատասխանից հետո միայն իր կողմից կտրվի բոլոր հարցերի պատասխան պարզաբանումները,հակառակ դեպքում հանձնաժողովի կողմից կայացրած ցանկացած որոշում Մ.Հայրապետյանի կողմից կդիտվի անհիմն և ոչ օրինաչափ:
Հանձնաժողովի նախագահն արտահայտեց այն կարծիքը,որ Մ.Հայրապետյանի վարքագիծը՝ Կազմակերպության լիազոր մարմիններին,Կարգապահական հանձնաժողովին պարզաբանումներ չտալը կամ չհամագործակցելը,խաթարում է «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի գործունեությունը և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի մյուս անդամների ընդհանուր շահերը և վտանգում է կազմակերպության անդամների հետագա առողջ և հարգալից փոխհարաբերությունները, ծառայելով վատ օրինակ:
Հանձնաժողովի նախագահն առաջարկեց վերոնշյալ նկատառումներից ելնելով «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 5-րդ հոդվածի 5.1 կետի հիմքով առաջարկել «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի Դիտորդ Խորհրդին սնանկության գործով կառավարիչ՝Մայիս Հայրապետյանին,որպես կարգապահական տույժ՝հայտարարել հրապարակային նկատողություն և սահմանել ժամկետ կարգապահական խախտումը վերացնելու համար 15-օրյա ժամկետ:
Հանձնաժողովի անդամները քննարկեցին առաջարկը և համաձայնելով նրա հետ քվեարկեցին՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 5
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանի 29.08.2018թ-ի թիվ 863 գրության հիմքով, սնանկության գործով կառավարիչ՝ Մայիս Հայրապետյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության,սնանկության գործով կառավարչի վարքագծի,նրա գործողությունները՝ օրենքին Կանոնադրությանը, Կանոնագրքին,կարգին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ»ԻԿԿ Դիտորդ Խորհրդին՝«Կարգապահական

Հանձնաժողովի գործունեության և ՍԳԿ նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» Կարգի 5 հոդվածի 5.1 մասի հիմքով հայտարարել սնանկության գործով կառավարիչ՝ Մայիս Հայրապետյանին հրապարակային նկատողություն և սահմանել հայտնաբերված կարգապահական խախտումները վերացնելու,15-օրյա ժամկետ, որից հետո սնանկության գործով կառավարիչը պետք է դիտորդ խորհրդին ներկայացնի վերացման մասին գրավոր տեղեկատվություն և համապատասխան ապացույցներ:
2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:
3. Հանձնաժողովի քարտուղարին ապահովել կողմերին սույն եզրակացության ուղարկումը:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան